ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0009, ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15/1, 010 511 773, www.court.am

№ ԴԴ-3-Ե- 3538

« 03 » մայիսի 2023թ.

ՆԱՐԵԿ ՊՈՂՈՍՅԱՆ ԱՁ-ԻՆ

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐԹՈՒՐ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

ԱԼՖԱ-ԷՏԱԼՈՆ ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Կ. ՄԱՐԿՈՍՅԱՆԻՆ

ԿՈՄՊԱՍՍ ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ս. ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ

ՍԵԳ ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Վ. ՍԵՓՈՅԱՆԻՆ

ՄՈՎՍԵՍՅԱՆ ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ա. ՄՈՎՍԵՍՅԱՆԻՆ

Սույնով ծանուցվում է, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար համակարգչային սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/12» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտերում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, մասնավորապես՝

<u>ԱՁ Նարեկ Պողոսյան</u>

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝

- դիմում հայտարարության երրորդ նախադասությունում նշված չէ մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,
- դիմում հայտարարության 1)-ին կետում սխալ է նշված գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/12» ծածկագրի փոխարեն նշված է «ՀԱՅՏ N ԵՋԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/6» ծածկագիրը:

<u>Անհատ Ձեռնարկատեր Արթուր Հարությունյան Սերյոժայի</u>

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝

- դիմում հայտարարության երրորդ նախադասությունում նշված չեն մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն, մասնակցի ռուսերեն լեզվով անվանումը և կազմակերպաիրավական տեսակը (նշված է մասնակցի հայերեն անվանումը և կազմակերպաիրավական տեսակը),

- դիմում-հայտարարության 1)-ին կետում ներառված չէ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/12» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին մասնակցին փոխկապակցված անձանց տվյալների համապատասխանության մասին հավաստումը,

- 2-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ, 12-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ չափաբաժինների մասով eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ նաև Համակարգ) մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, մասնավորապես՝

- 2-րդ չափաբաժնով նախատեսված՝ համակարգչի կոշտ սկավառակի մասով հրավերով սահմանված է՝ «ծավալը՝ **առնվազն 500GB**», սակայն մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում նշված է՝ «ծավալը՝ **100GB**», ինչը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջին: Միաժամանակ հիշյալ նկարագրում բացակայում են հրավերով նախատեսված՝ Վաճառողի միջոցների հաշվին Գնորդի պահեստ ապրանքների տեղափոխման ու բեռնաթափման, ինչպես նաև ապրանքների համար երաշխիքային ժամկետի սահմանման (հրավերով նախատեսված է՝ Դատական դեպարտամենտի կողմից ապրանքներն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 1 տարի) վերաբերյալ պայմանները,

- 5-րդ, 6-րդ, 8-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ չափաբաժինների մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերում բացակայում են հրավերով նախատեսված՝ Վաճառողի միջոցների հաշվին Գնորդի պահեստ ապրանքների տեղափոխման ու բեռնաթափման, ինչպես նաև ապրանքների համար երաշխիքային ժամկետի սահմանման (հրավերով նախատեսված է՝ Դատական դեպարտամենտի կողմից ապրանքներն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 1 տարի) վերաբերյալ պայմանները,

- 12-րդ չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում բացակայում է հրավերով նախատեսված՝ Վաճառողի միջոցների հաշվին Գնորդի պահեստ ապրանքների տեղափոխման ու բեռնաթափման վերաբերյալ պայմանը,

- 17-րդ չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում բացակայում են հրավերով նախատեսված՝ մալուխի յուրաքանչյուր փաթույթի երկարության վերաբերյալ տեղեկատվությունը (հրավերով սահմանված է՝ մալուխի յուրաքանչյուր փաթույթի երկարությունը՝ 305մ (շեղում՝ +, - 2%)), ինչպես նաև Վաճառողի միջոցների հաշվին Գնորդի պահեստ ապրանքների տեղափոխման ու բեռնաթափման վերաբերյալ պայմանը:

<u>Ալֆա-Էտալոն ՍՊԸ</u>

- ներկայացված հայտում առկա փաստաթղթերը (էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարություն (Հավելված N 1), իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3) հաստատված են լիազորված անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հայտով ներկայացված է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ՝ լիազորագիր, սակայն լիազորագրով Ալֆա-Էտալոն ՍՊԸ-ի տնօրենը լիազորել է հիշյալ անձին էլեկտրոնային ստորագրությամբ ստորագրելու մրցույթների փաստաթղթերը, այն դեպքում, երբ քննարկվող գնման գործընթացը կազմակերպվել է **էլեկտրոնային աճուրդի** ընթացակարգով,

- 19-րդ չափաբաժնով նախատեսված՝ ցանցային միջերեսի քարտերի մասով հրավերով սահմանված է՝ «**առնվազն**՝ 10/10/100Mbps», սակայն մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում միաժամանակ նշված է «**10/10/100Mbps**» և «TP-Link TG-3468 (**10/100/1000Mbps**, PCI-E)»: Անհրաժեշտ է հստակեցնել առաջարկվող ցանցային միջերեսի քարտերի վերոնշյալ պարամետրը,

- 20-րդ չափաբաժնով նախատեսված՝ ցանցային միջերեսի քարտերի մասով հրավերով սահմանված է.

• «ինտերֆեյս՝ **PCI**», սակայն մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում նշված է նաև «TP-Link TG-3468 (10/100/1000Mbps, **PCI-E**)», ինչը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջին,

• «**առնվազն**՝ 10/10/100Mbps», սակայն մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում միաժամանակ նշված է «**10/10/100Mbps**» և «TP-Link TG-3468 (**10/100/1000Mbps**, PCI-E)»: Անհրաժեշտ է հստակեցնել առաջարկվող ցանցային միջերեսի քարտերի վերոնշյալ պարամետրը:

Կոմպասս ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ դիմում հայտարարության երրորդ նախադասությունում նշված չէ մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն:

ՍԵԳ ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունում (Հավելված N 1) նշված է, որ ՍԵԳ ՍՊԸ-ն հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ: ՍԵԳ ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացվել է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն Հավելված 1.2-ի, որը գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել, քանի որ հրավերի ՄԱՍ I-ի 4.3-րդ կետի 1)-ին ենթակետի «ե)» պարբերության պահանջների համաձայն, ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը ներկայացնում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն հավելված 1.3-ի: ՍԵԳ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է հրավերով պահանջվող Հավելված N 1.3-ը:

Մովսեսյան ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունում (Հավելված 1) նշված է, որ Մովսեսյան ՍՊԸ-ն հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ: Մովսեսյան ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացվել է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն Հավելված 1.2-ի, որը գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել, քանի որ հրավերի ՄԱՍ I-ի 4.3-րդ կետի 1)-ին ենթակետի «ե)» պարբերության պահանջների համաձայն, ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը ներկայացնում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն հավելված 1.3-ի: Մովսեսյան ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է հրավերով պահանջվող Հավելված N 1.3-ը,

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝

• դիմում հայտարարության երրորդ նախադասությունում նշված չէ մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

• դիմում-հայտարարության 1)-ին կետում ներառված չէ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/12» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին մասնակցին փոխկապակցված անձանց տվյալների համապատասխանության մասին հավաստումը,

- Մովսեսյան ՍՊԸ-ի կողմից eauction.armeps.am համակարգում մուտքագրված (լրացված) չէ 13-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/12» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11 կետը՝

առաջարկվում է մինչև սույն թվականի **մայիսի 04-ը ներառյալ** eauction.armeps.am համակարգի միջոցով շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնվում է, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում՝ հայտերը կգնահատվեն անբավարար և կմերժվեն:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ, ՂԵԿԱՎԱՐԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ

ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/12» ծածկագրով գնման ընթացակարգի համակարգող՝ Գ. Դադիվանյան
Հեռ.՝ /+37410/ 511-783, 511-788